

ՇԼԵԶՎԻԳ-ՖՈԼԵՏԵՅՆԻ ԽՆԴՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ «ՄԵՂՈՒ ՉԱՅԱՍՏԱՆԻ» ԼՐԱԳՐԻ ԷԶԵՐՈՒՄ

Արևելահայ ազգային - պահպանողական հոսանքի ծայնափող «Մեղու Չայաստանի» լրագիրը 1860-ական թվականներին հանգամանորեն անդրադառնում էր եվրոպական քաղաքական դեպքերին ու իրադարձություններին: Լրագիրը 1863թ. ընթացքում ամենայն մանրամասնությամբ անդրադարձավ ռուսական ցարիզմի դեմ ուղղված լեհ ժողովրդի ապստամբությանը, իսկ նրա ավարտից հետո նույն ջանադրությամբ լուսաբանեց նաև Դանիա-գերմանական հակամարտությունը: Լրագիրը, գրում է, որ լեհական խնդիրը չավարտված 1863թ. վերջին «մի նոր և նշանավոր հարց» առաջացավ Եվրոպայում և անմիջապես գրավեց եվրոպական մեծ պետությունների ուշադրությունը:

«Մեղու Չայաստանին» դա համարում է Շլեզվիգ-Ֆոլշտեյնի դքսությունների հարցը, քանզի նրա «վճռվելից է կախված շատ տերությունների նշանակությունը և քաղաքական կշիռը Եվրոպայի հյուսիսում, մանավանդ Բալթիկ ծովի վրա»:¹

Լրագիրն իրավացիորեն գրում է, որ թեպետ այս դքսությունները «ընդարձակ և բազմազգ» տարածք չեն, այնուամենայնիվ շատ բան կախված է նրանից, թե ում տիրապետության տակ կանցնեն: Եթե նրանք մնան Դանիայի իշխանության տակ, ապա Եվրոպայի հյուսիսում կպահպանվի ներկայումս գոյություն ունեցող վիճակը: Դքսությունները Դանիայից անջատվելու և Գերմանիային միանալու դեպքում վերջինս տեր կդառնա ծովեզրյա նավահանգիստներին, «կարող է շատ զորանալ ծովի վրա» և ժամանակին ախոյան դառնալ Բալթիկ ծովում «կշիռ ու նշանակություն ունեցող» պետությունների համար:

Շլեզվիգ-Ֆոլշտեյնի խնդիրը նորություն էր եվրոպական դիվանագիտության համար: Վիեննայի 1815թ. վեհաժողովի որոշմամբ Դանիան պահպանեց իր իրավունքը Շլեզվիգ-Ֆոլշտեյնի նկատմամբ, բայց Ֆոլշտեյնը հայտա-

¹ «Մեղու Չայաստանի», 1864, 4 հունվարի, թիվ 1, էջ 2:

րարվեց Գերմանական միության անդամ²: Այս դքսությունները բնակեցված էին հիմնականում գերմանացիներով, որոնք սկսած 1830-ական թթ. ազգային-ազատագրական շարժում ծավալեցին Դանիայի տիրապետությունից դուրս գալու համար: Դքսությունները 1848թ. մարտին հռչակեցին Դանիայից իրենց անկախությունը և պատերազմ հայտարարեցին նրան:

Դանիա-Պրուսական 1848-1850թթ. պատերազմի արդյունքով դքսությունները Դանիայի հետ կարող էին կապվել միայն անձնական դաշինքով, իսկ Յոլլշտեյնը շարունակեց մնալ Գերմանական միության անդամ:

1863թ. նոյեմբերին դանիական խորհրդարանը ընդունեց նոր սահմանադրություն, որով Շլեզվիգը Յոլլշտեյնի և Լաուենբուրգի հետ համարվում էր միայն անձնական դաշինքով կապված ու նրա վրա տարածվում էր դանիական սահմանադրությունը: Ավստրիան և Պրուսիան Դանիայից պահանջեցին 48 ժամվա ընթացքում վերացնել նոր սահմանադրությունը և, ստանալով կառավարության նոր ղեկավար Մոնրադի մերժումը, ներխուժեցին Շլեզվիգ³:

Դքսությունների նկատմամբ եվրոպական պետությունների դիրքորոշումը ելնում էր նրանց քաղաքական շահերից: Դանիան ձգտում էր հիմնովին իրեն ենթարկել հարյուրամյակներ շարունակ իր հետ անձնական դաշինքով կապված այդ տարածքները, իսկ Ավստրիան ու Պրուսիան ցանկանում էին գերմանաբնակ դքսությունները միացնել իրենց:

Շլեզվիգ-Յոլլշտեյնի դքսության գերմանաբնակ ժողովրդի համար այդ պայքարն ազգային-ազատագրական էր, քանի որ նպատակ էր հետապնդում իրականացնել ազգային միավորում:

«Մեղու Գայաստանին» ճիշտ նկատելով, որ Շլեզվիգ-Յոլլշտեյնի հարցը դառնում է եվրոպական դիվանագիտության հիմնահարցերից մեկը, ձգտում է այն համակողմանիորեն լուսաբանել եվրոպական մամուլի նյութերով: Լրագիրը 1864թ. ընթացքում, գրեթե յուրաքանչյուր համարում, անդրադառնում է այս խնդրին՝ զետեղելով հեռագրական լուրեր ու եվրոպական մամուլից թարգմանություններ: Լրագրի սեփական դատողությունները, վերլուծություններն ու եզրահանգումներն անհամեմատ քիչ են, բայց և այնպես ուշագրավ են հայ

² Зак Л.А., Монархи против народов. М., 1966, стр. 289-291.

³ Кан А.С., История скандинавских стран, М., 1980, стр. 124

հասարակական մտքի և պարբերական մամուլի պատմության համար, մանավանդ, որ արևելահայ ոչ բոլոր պարբերականներն են ուշադրություն դարձրել Շլեզվիգ-Հոլշտեյնի խնդրին:

Լրագրի տեղեկատվության աղբյուրը չափազանց ընդգրկուն է: Նա մախապատվությունը չի տալիս դանիական, պրուսական և ավստրիական մամուլին, քանի որ նրանք ներկայացնում էին հակամարտող կողմերի շահերը և հավասարապես օգտվում է նաև անգլիական, ֆրանսիական և ռուսական լրատվամիջոցներից: Դա ոչ միայն համակողմանի է դարձնում լրագրի հրապարակումները, այլև բացահայտում է եվրոպական երկրների դիրքորոշումը, նրանց հակասություններն ու քաղաքական շահերը խնդրո առարկա հարցում:

Եվրոպական լրագրերի տեղեկատվություններից «Մեղու Հայաստանին» գալիս է այն հետևության, որ «ազգային շարժումը» Դանիայում շատ մեծ է և նրա պատճառը գերմանացիների «անիրավ վարմունքն» է ու նրանց «գործողությունների խարդախ ձևը»:

Համընդհանուր այս ոգևորությանը խանգարում է Դանիայի թագավոր Քրիստիան IX ծագումով գերմանացի լինելը, որին դանիացիները կասկածանքով են նայում: Եթե նա փոքր ինչ բարեկամություն ցույց տա գերմանացիներին, ապա նրան հայրենիքի դավաճան կանվանեն:

«Մեղու Հայաստանին» այս լուրերը համարում է «շատ հավանական և վտանգները շատ հիմնավոր», որի պատճառով չի թաքցնում իր «ծանր և անհաճո զգացմունքը» Եվրոպայի անորոշ քաղաքականության կապակցությամբ: Լրագրի կարծիքով ստեղծված իրադրության մեջ երկու հնարավոր ելք կա: Մեկ՝ դանիացիները պիտի զոհ գնան գերմանացիներին, կամ էլ պիտի չթողնեն, որ նրանք իշխեն Դանիայում: Առաջին դեպքում եվրոպական քաղաքականությունը պիտի լռի, իսկ երկրորդի պարագայում պիտի իր վճռական խոսքն ասի ու Դանիա ուղարկի հարյուր հազար զինվոր: Լրագրի համոզմամբ «Այս միջոցով միայն կարելի է գերմանացիներին բան հասկացնել»⁴:

Փաստորեն «Մեղու Հայաստանին» կողմ էր, որ եվրոպական երկրները միջամտեն դանիա-գերմանական հակամարտությանը և հանդես գան գերմանացիներին զսպողի դերում: Լրագրի համակրանքը դեպի դանիացիները

⁴ «Մեղու Հայաստանի», 1864, 18 հունվարի, թիվ 3, էջ 27:

դրևտրվում է նաև նրա հետագա հրապարակումներում: Թերթը տպագրում է «Daip Nene» լրագրի հակագերմանական հոդվածը, ըստ որի Գերմանիան դքսություններում բռնել է «բռնության և անիրավության» ճանապարհը և «ամենևին իրավունք չունի» տիրելու Գոլշտեյնին⁵:

Պրուսական լրագրերից մեկն արդարացնում էր Պրուսիայի և Ավստրիայի հավակնությունները դքսությունների նկատմամբ՝ գտնելով, որ նրանք գործում են որպես եվրոպական պետություններ և ոչ թե գերմանական միության անդամներ ու դրանով որևէ մեկի իրավունքը չեն ոտնահարում:

«Մեղու Գայաստանին» քննադատում է այս լրագրին, ըստ որի ստացվում է, թե մարդիկ «իրավունք չունին իրանց ազատության վերա»: Լրագիրը զարմանում է գերմանական թերթի խմբագրի դատողության վրա, քանի որ դքսությունների նվաճումը ոտնահարում է դանիացիների իրավունքը, որի կառավարությունը պարտավոր է մտածել իր ժողովրդի մասին:

«Ազգերը և կառավարությունները», - գրում է «Մեղու Գայաստանին», - «անբաժան պետք է լինին ու երկուսն էլ միմյանց համար լինին»:

Լրագրի կարծիքով երբ կառավարությունները ղեկավարում են ժողովրդի ցանկություններն առաջ տանող շարժումը, ապա դրանից ոչ թե թուլանում են, այլ ուժեղանում, որովհետև յուրաքանչյուր պետության «հզորությունը կայանում է կառավարության և ժողովրդի մեջ եղած համաձայնության և հավատարմության վրա»:⁶

Գակամարտող կողմերի միջև պատերազմը սկսվեց 1864թ. փետրվարի 1-ին՝ ավստրո-պրուսական զորքերի Շլեզվիգ ներխուժելով:

«Մեղու Գայաստանին» պատերազմի սկիզբը շատ վաղ է համարում՝ գտնելով, որ իրենց «ժանրաշարժությամբ» հայտնի գերմանացիներն այս անգամ շտապեցին, չցանկացան լսել «խոհեմության խորհուրդները» և զգուշավորություն հանդես չբերեցին, քանզի մեծ էր Ավստրիայի և Պրուսիայի կառավարությունների «ցանկությունը» Շլեզվիգ-Գոլշտեյնը իրենց ենթարկելու հարցում: Լրագիրը գերմանացիների այդ քայլն անվանում է «անմիտ ձգտում»,

⁵ Նույն տեղում, էջ 28:

⁶ Նույն տեղում:

որովհետև նրանք չեն հասկանում, որ իրենց ազահությունը կստանա իր արժանի հատուցումը:

«Մեղու Հայաստանին» հույս ուներ, որ գերմանացիների «ազահությունը» կպատժվի Անգլիայի և Ֆրանսիայի կողմից ու պատերազմը էյդերի ամերից կտեղափոխվի Հռենոսի ամերը: Լրագրի կարծիքով գերմանացիները հարձակվելով իրենցից տասնապատիկ թույլ հակառակորդի վրա՝ դրանով առաջ բերեցին իրենց «բնական դաշնակցի և միակ բարեկամ» Անգլիայի թշնամությանը⁷: Լրագիրն Անգլիային համարում է արդեն գերմանացիների «թշնամիների բանակում» և ենթադրում, թե ավստրո-պրուսական զորքերը Դանեվերկում դանիացիների հետ միասին իրենց հակառակորդ կունենան նաև անգլիացիներին: Թերթը գտնում է, որ Անգլիան դեմ չի լինի, որպեսզի Ֆրանսիան իր հաշիվները տեսնի գերմանացիների հետ, երբ Նապոլեոն III «կթողնե անորոշ քաղաքականության դիմակը»: Նրա համոզմամբ Նապոլեոնը չի կարող «պատերազմի ժամանակ ձեռները ծալած երկար նստել հանդարտ» և պատերազմի մեջ պիտի մտնի Ֆրանսիայի «սահմանների ընդարձակման» համար: Լրագրի համոզմամբ Նապոլեոն III երկար ժամանակ գերմանական պետությունների հետ վարվում էր «շատ զգուշությամբ, ավելի լավ է ասել խորամանկությամբ», բոլորովին թշնամության նշաններ ցույց չէր տալիս և նույնիսկ զգուշացնում էր, թե «ինքն հավան է գերմանացիների պահանջմունքներին Հոլլանդի և մինչև անգամ Շվեյցարի մասին»⁸:

Սակայն գերմանացիները խաբվել են իրենց հաշիվների մեջ, քանի որ Ֆրանսիայի հայտարարած չմիջամտելու քաղաքականությունը նրան «կատարյալ ազատություն» է տալիս իր հետագա գործողություններում:

Ֆրանսիայի չլռելու երկրորդ լուրջ պատճառը «Մեղու Հայաստանին» համարում է նրա իրավացի պահանջը Եվրոպայում սահմանների փոփոխության դեպքում իր համար «վարձատրություն» ստանալու հարցում: Եվ վերջապես, «Ֆրանսիային հարկավոր է պատերազմ» և դրա համար ոչինչ արգելք չի կարող, մասնավոր, որ «գերմանացիները իրենց անմիտ ձգտումով տալիս են նրան հաջողակ պատճառ փառավոր պատերազմ սկսելու»⁹:

⁷ Նույն տեղում, 1864, 15 փետրվարի, թիվ 7, էջ 57:

⁸ Նույն տեղում, էջ 58:

⁹ Նույն տեղում:

Լրագիրն անդրադառնում է նաև Ռուսաստանի հնարավոր դիրքորոշմանը և կարծիք հայտնում, թե դանիական հարցը կապված է Ռուսաստանի շահի հետ. ուստի նա չի կարող «մեկուսի մնալ» և չմասնակցել Էյդերի ափերում տեղի ունեցող իրադարձություններին: Լրագիրը դա «բնական է»¹⁰ համարում հավանաբար նկատի ունենալով Շլեզվիգ-Հոլշտեյնի համար 1848-1850թթ. պայքարը, երբ Ռուսաստանը Ֆրանսիայի և Անգլիայի հետ միասին Պրուսիային ստիպեց հրաժարվել դքսություններից:

«Մեղու Հայաստանին» մտածում էր, թե Ռուսաստանն այս անգամ էլ այդպես կվարվի և անմիջականորեն կօգնի Ղանիային: Սակայն թերթն անտեսում է այն իրողությունը, որ 1864թ. Ռուսաստանի միջազգային դրությունը բոլորովին նման չէր 1848թ. վիճակին, երբ նա հանդես էր, զալիս որպես Եվրոպայի ժանդարմ ու ճնշում էր եվրոպական ժողովուրդների հեղափոխական և ազատագրական պայքարը:

Պարբերականը մոռանում է, որ Ռուսաստանը այդ օրերին դեռևս զբաղված էր լեհերի պայքարը ճնշելով և հնարավորություն չունեի ակտիվանալ դանիական հարցում: Լրագիրն անտեսում է, որ 1863թ. փետրվարի ռուսարուսական ռազմական դաշինքն ընդդեմ լեհերի և Ավստրիայի չեզոքությունը լեհական ապստամբության ճնշման հարցում, կաշկանդում են Ռուսաստանի գործողություններն ընդդեմ Պրուսիայի և Ավստրիայի: Այնպես որ «Մեղու Հայաստանին» Ռուսաստանի միջամտությունը դանիական հարցում «բնական» համարելով ամենից առաջ իր ցանկությունն է հայտնում, որով Ղանիան օգնություն կստանար, քան թե օրյեկտիվորեն վերլուծում է Ռուսաստանի դիրքորոշումը:

«Մեղու Հայաստանին» ենթադրում է, որ Եվրոպայում բռնկված այս պատերազմի հրդեհը դժվար թե մնա փոքրիկ Շլեզվիգի սահմաններում և ոչ ոք չի կարող ճիշտ գուշակել, թե այն երբ կավարտվի: Ըստ լրագրի, ճակատագրի բերումով, այս պատերազմը սկսել են «խաղաղասեր, ավելի ավանդապահ» պետությունները՝ «զգույշ Ավստրիան և ավելի ևս զգույշ ու խոհեմ Պրուսիան»: Եվրոպական այս պատերազմի անթիվ թշվառությունների համար ամենից առաջ պատասխան պիտի տա «նա, ով առաջինը սկսավ պատերազմը:

¹⁰ Նույն տեղում, էջ 59:

Արդարության մեծ օրենքը անկատար մնացած կլինի. եթե գերմանացիները անպատիժ կմնան այն թշվառությունների համար, որոնց մեջ նոքա բոլոր եվրոպան գեցեցին իրանց անմտությամբը»¹¹:

Լրագիրը սխալվում է իր վերլուծության մեջ՝ կարծելով, թե Անգլիան, Ռուսաստանն ու Ֆրանսիան պատերազմի մեջ կմտնեն գերմանական պետությունների հետ և թույլ չեն Շլեզվիգ-Հոլշտեյնի գավախուժումը: Անցյալի դասերից ելնելով լրագիրը, թերևս, այդպիսի հիմքեր ուներ, քանի որ երբ 1848թ. ծագեց Շլեզվիգ-Հոլշտեյնի առաջին պատերազմը, Ռուսաստանը, Անգլիան և Ֆրանսիան չցանկանալով գերմանիայի ընդլայնումն ու հզորացումը, հաղթանակած Պրուսիային ստիպեցին զինադադար կնքել և զորքերը դուրս բերել դքսություններից: Մի փոքր ուշ՝ 1852թ. Լոնդոնում, մեծ պետությունների անմիջական նախաձեռնությամբ ու ջանքերով կնքվեց արձանագրություն, որն անձեռնմխելի էր համարում դանիական միապետությունը և սահմանում էր դանիական թագի գահակալման կարգը: Եվրոպական մեծ տերությունները դրանով Դանիային փրկեցին ջախջախումից, սակայն Շլեզվիգ-Հոլշտեյնի երկրորդ պատերազմի ժամանակ նրանք նախընտրեցին հակամարտությունը կարգավորել եվրոպական երկրների գազաթաժողով հրավիրելով¹²: Մեծ տերությունների Լոնդոնում կայացած հաշտարար գազաթաժողովում չստանալով եվրոպական պետությունների աջակցությունը, Դանիան մնաց մենակ երկու հզոր հակառակորդների հետ ու պատերազմում դաժան պարտություն կրեց:

«Մեղու Հայաստանին» պատմում է դանիացիների պարտության մասին Դանեվիրկե ամրոցի, Կոզելի և Միսունգեի մոտ, ընդգծում է ավստրոպրուսական զորքերի գերակշռությունը, դանիացիների նկատմամբ և հայտնում պատերազմի ծանրության մեծ մասը Պրուսիայի վրա ընկած լինելու մասին:

Առաջին ընդհարումներից հետո լրագիրը կասկած չուներ, որ շվեդահանիական դաշինքը կգործեր ու Շվեդիան ոչ միայն կօգներ պաշտպանելու դանիական կղզիները, այլև առանձին զորք կուղարկեր պատերազմի դաշտ¹³: Սակայն թերթի այս հույսն էլ չարդարացավ, Շվեդիան օգնության չեկավ և

¹¹ Նույն տեղում, էջ 58:

¹² См. Рюте А.К. Шле́йзвиг-Гольштинский вопрос и политика европейских держав в 1863-1864 годах, Таллин, 1957

¹³ «Մեղու Հայաստանին», 1864, 15 փետրվարի, թիվ 7, էջ 59:

Դանիան պատերազմը վարեց մենակ: Շարունակելով լուսաբանել Դանիա-գերմանական հակամարտության ընթացքը, լրագիրը հիմնական ուշադրությունը դարձնում է ոչ թե պատերազմական գործողություններին, այլ եվրոպական մեծ պետությունների դիրքորոշմանը:

Թերթի դիտարկումով անգլիական մամուլը մեղադրում էր իր կառավարությանը դանիական հարցում անտարբերություն դրսևորելու համար և կարծիք հայտնում, թե Անգլիան դրանով «դառավ ծաղրի առարկա իր բարեկամների և թշնամիների համար»¹⁴:

Ֆրանսիական ծանուցագիրը հայտնում էր, թե կառավարությունը կանի հարկավոր ամեն բան, որպեսզի սկսված պատերազմն ու արյունահեղությունը դադարեցվի: Ֆրանսիան պատրաստ էր առաջարկել իր միջնորդությունը, եթե պատերազմող կողմերը տային իրենց համաձայնությունը: Լրագրի կարծիքով Ֆրանսիան սրանով կամենում է կաշկանդել գերմանական երկու պետություններին, որպեսզի պահպանի «իր ազատությունը իր ապագա գործողությունների համար», սակայն նա միաժամանակ հանդես է գալիս Դանիայի թագավորության ամբողջականության պահպանման օգտին:¹⁵

Ավստրիական լրագրերը չէին կարողանում կողմնորոշվել, թե Նապոլեոն III ինչ դիրքորոշում կգրավի Պրուսիայի և Ավստրիայի նկատմամբ, բայց համոզված էին, որ պաշտոնական Փարիզը, Պրուսիայի և Ավստրիայի դաշինքն այս պատերազմում համարում է «անբնական և վտանգավոր»:

Ֆրանսիան, Ռուսաստանը և Անգլիան փետրվարի 23-ին Ավստրիային ու Պրուսիային հրավիրեցին գազաթաժողովի ղեկությունների հարցի կապակցությամբ: Մինչ եվրոպական պետությունները ձգտում էին դիվանագիտական ճանապարհով կարգավորել ղեկությունների խնդիրը, ավստրո-պրուսական զորքերը շարունակում էին իրենց նվաճումները: Դանեվիրկի անկումից հետո Պրուսիան համոզեց Ավստրիային ներխուժել Յուլանդիա: Վեցշաբաթյա պաշարումից հետո՝ ապրիլի 18-ին, դանիացիները կորցրեցին Դյուպելի ամրությունները, իսկ ամբողջ Յուլանդիան անցավ ավստրո-պրուսական զորքերին¹⁶:

¹⁴ Նույն տեղում, 1864, 29 փետրվարի, թիվ 9, էջ 73:

¹⁵ Նույն տեղում, 1864, 4 ապրիլի, թիվ 14, էջ 113:

¹⁶ История XIX века. Под. ред. Лависса и Рамбо. т. 5, М., 1938, стр. 324

Դա հանգեցրեց գինադադարի կնքմանը և Դանիան ընդունեց դքսությանը՝ թյունների հարցով մեծ պետությունների դեսպանաժողովին մասնակցելու առաջարկությունը:

«Մեղու Հայաստանին» այն կարծիքին է, որ եվրոպական երկրների գազաթափողովից «ոչ մի հետևանք սպասել չի կարելի»¹⁷:

Լրագիրը իրազեկ էր, որ գազաթափողվում շատ քիչ առաջընթաց կա և շարունակ կայացող միստերն արդյունք չեն տալիս: Մայիսի 21-ի միստում Ֆրանսիան և Անգլիան առաջարկեցին դքսությունները Դանիայից անջատել և առանձին իշխանություն կազմել: Ավստրիայի և Պրուսիայի ներկայացուցիչները իրենց կառավարության անունից հավանություն տվեցին այս առաջարկությանը: Հույս կար, որ Ռուսաստանն էլ կընդունի այն: Սակայն, ըստ լրագրի, ամեն բան կախված է Դանիայի կամքից, քանի որ «նրա համառությունը կարող է քանդել այս պլանները՝ խնդիր խաղաղությունով վերջացնելու համար»:¹⁸

«Մեղու Հայաստանին» կողմնակից էր հակամարտությունը խաղաղ ճանապարհով կարգավորելուն, որպեսզի Դանիան մեծ կորուստներ չկրի: «Դժբախտաբար, - գրում է լրագիրը, եթե հավատանք գերմանական մամուլին Դանիայի միտքը դարձյալ պատերազմ է»: Անգամ խոսք է գնում այն մասին, թե Դանիան մտադիր է իր ներկայացուցիչներին ետ կանչել գազաթափողովից, եթե գերմանական պետությունները շարունակեն պնդել իրենց պահանջը:

Լոնդոնի գազաթափողվում Անգլիան և Ռուսաստանն առաջարկում էին Դանիա-պրուսական սահմանաբաժանի լուծումը հանձնել եվրոպական չեզոք պետություններից մեկին, որի առաջարկությունը հակամարտող կողմերը չպետք է վիճարկեին: Այս առաջարկությանը կողմ էին Ֆրանսիան և Շվեդիան, իսկ Պրուսիան ու Դանիան դեմ էին, ուստի համաձայնություն չկայացավ և հունիսին պատերազմական գործողությունները վերսկսվեցին:

«Մեղու Հայաստանին» փաստում է Լոնդոնի գազաթափողվի «անհաջող» ավարտը և բոլորի կողմից Դանիայի «անօգնական» մնալը: Ստեղծված իրավիճակում Քրիստիան IX թագավորին մնում էր ընդունել Ավստրիայի և

¹⁷ «Մեղու Հայաստանին», 1864, 11 ապրիլի, թիվ 14, էջ 121:

¹⁸ Նույն տեղում, 1864, 6 հունիսի, թիվ 22, էջ 171:

Պրուսիայի առաջարկած պայմանները և վերջ տալ այդ «անհավասար պատերազմին, որ Դանիայի համար կորստական է»:

Լրագրի համակրանքն ամբողջովին միայնակ մնացած Դանիայի կողմն է, որը չնայած թշնամու ռազմական գերազանցությանը «հանձն առավ ազնվաբար վերջին ճիգը թափել իր իրավունքների պաշտպանության համար»¹⁹:

Պատերազմի դաշտից ստացված լուրերը լրագիրը, համարում է ոչ «մխիթարական» Դանիայի համար, թեև նրա զինվորները, կռվում էին քաջաբար: Թերթը ավստրո-պրուսական կողմին դիտում է որպես նվաճողներ, որոնք փոքրիկ ու թույլ Դանիայից ցանկանում են խլել նրա օրինական տարածքները: «Մեղու Դայաստանին» չէր ընկալում այն իրողությունը, որ դքսությունների բնակչության մեծամասնությունը գերմանացիներ էին, որոնք ցանկանում էին միավորվել իրենց ազգակիցների հետ և պատրաստ էին այդ բանին հասնել նաև խաղաղ ճանապարհով՝ հանրաքվե անցկացնելու միջոցով: «Մեղու Դայաստանին» պրուսական և ավստրիական մամուլից տեղյակ էր այս մասին ու նույնիսկ գրում էր, որ նրանց կառավարությունները Դանիային դքսություններում հանրաքվե անցկացնելու առաջարկություն են արել, սակայն միևնույնն է, չէր ընկալում գերմանացիների ազգային միավորման իրավունքը: Լրագրի կարծիքով Դանիայի վիճակը չափազանց ծանր է, նա երկու կրակի մեջ է գտնվում ու չի կարողանում կողմնորոշվել, թե ինչպես վարվի: Եթե համաձայնվի Պրուսիայի առաջարկած պայմանի հետ, ապա երաշխիք չունի, որ ժողովուրդը ուղքի չի կանգնի և իր «անբավականությունը չի հայտնի» հաշտության դեմ, որը նրան զրկելու է ամենահարուստ տարածքներից: Մյուս կողմից, Դանիան չհամաձայնվելու տարբերակ էլ չունի, որովհետև չի կարող միայնակ կռվել Պրուսիայի և Ավստրիայի միացյալ ուժերի դեմ:²⁰

Դանիայի վիճակն, իսկապես, անելանելի էր: Շուտով Վիեննայում հրավիրվեց եվրոպական երկրների նոր գագաթաժողով և օգոստոսի 2-ին հակամարտող կողմերը, կնքեցին նախնական համաձայնություն:

«Մեղու Դայաստանին» կրկին անդրադառնում է անգլիական մամուլին, որը չէր կարողանում թաքցնել իր զարմանքը տեղի ունեցածի կապակցությամբ և տարակուսում էր, թե ինչպես Անգլիան, Ֆրանսիան ու Ռուսաստանը

¹⁹ Նույն տեղում, 25 հուլիսի, թիվ 29, էջ 225:

²⁰ Նույն տեղում, 1864, 8 օգոստոսի, թիվ 31, էջ 241:

չկարողացան Լոնդոնում հաշտեցնել կողմերին. իսկ ահա պատերազմող կողմերից մեկի մայրաքաղաքում հավաքված գազաթաժողովը հեշտությամբ գտավ հաշտեցման ուղիներ²¹:

Այսպիսով, պատերազմն ավարտվեց, հաղթողները հասան իրենց նպատակին և դքսությունները խլեցին Ռանիայից:

«Մեղու Չայաստանին» վաղաժամ է համարում հաղթողների ուրախությունը, որովհետև դեռևս վճռված չէր, թե ում գերակայություն տակ են նրանք անցնում: Լրագիրը այն համոզմանն է, որ Բիսմարկը իր հաշվարկներում սխալվել է՝ մտածելով, թե դքսությունները կմիանան Պրուսիային: Եթե մի փոքր առաջ, Բիսմարկը «քաղցը երազներով օրորվելով» կարծում էր, թե հեշտությամբ Ռանիայից «հափշտակած երկրները, կմիացնի Պրուսիայի հետ, ապա այսօր համոզված է, որ այդ երազը անկարելի է, որ կատարվի»:²²

Լրագիրն իր համոզմունքը մեկնաբանում է նրանով, որ Պրուսիայի այդ ձգտումն առաջ կբերի ոչ միայն իր դաշնակից Ավստրիայի և Գերմանական միության անդամ երկրների, այլև եվրոպական մյուս պետությունների «ընդդդիմությունը»: Թերթը չէր սխալվում իր եզրակացությունում, քանի որ Ավստրիան առաջարկեց դքսություններում ստեղծել Ավստրիայի, Պրուսիայի և Գերմանական միության ներկայացուցիչներից բաղկացած ժամանակավոր կառավարություն, որը Պրուսիան ընդունեց:

Չոկտեմբերի 30-ին Վիեննայում կնքված հաշտության պայմանագրով Չոլշտեյնը, Լաուենբուրգը և գրեթե ամբողջ Ելեզվիզը անցան Պրուսիայի և Ավստրիայի համատեղ կառավարմանը: Ամբողջ տասն ամիս պահանջվեց, որպեսզի Ավստրիան ու Պրուսիան համաձայնության գան դքսությունների կառավարման կարգի վերաբերյալ: 1865թ. օգոստոսի 14-ի Չոլշտեյնյան համաձայնագրով Ելեզվիզի կառավարումն անցավ Պրուսիային, իսկ Չոլշտեյնինը՝ Ավստրիային: Լաուենբուրգն Ավստրիան 2,5 մլն դանիական տալերով վաճառեց Պրուսիային, որն իրավունք ստացավ կառուցել հյուսիս-ծովային ջրանցք և երկաթուղի Չոլշտեյնում:

Պրանով Պրուսիան առաջին լուրջ քայլն արեց Գերմանիայի ազգային միավորման ճանապարհին, որը «Մեղու Չայաստանին» իր ժամանակին չէր ընկալում:

²¹ Լույն տեղում, 1864, 15 օգոստոսի, թիվ 32, էջ 250:

²² Լույն տեղում, 1864, 30 օգոստոսի, թիվ 34, էջ 265: